

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նորակերտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի 2018թ. բյուջեի կատարման ուղղությամբ:

/ Զեկ. Գ. Սարգսյան - համայնքի ղեկավար/

Մեծարգո պարոն մարզպետ, ավագանու հարգելի մասնակիցներ, տեղեկացնում եմ, որ համաձայն համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 1-ի նիստով հաստատված համայնքի 2018 թ. բյուջեի ցուցանիշների, նախատեսվել էր համայնքի բյուջեի եկամտային մասը ապահովել 28442,4 հազար դրամ, որից սեփական հարկային եկամուտները 8614,0 հազար դրամ, այդ թվում գույքհարկ - 1900,0 հազար դրամ, հողի հարկ 6714,0 հազար դրամ, տեղական տուրքեր և վճարները 10.0 հազար դրամ :

Ոչ հարկային եկամուտները նախատեսվել է 4733,4 հազար դրամ, որից հողի վարձավճար – 4733,4 հազար դրամ :

Աղբահանության վճար 588,0 հազար դրամ :

Համահարթեցման դոտացիա է հատկացվել 14497,0 հազար դրամ :

Ընդանուր եկամուտներ - 28442,4 հազար դրամ :

Տեղեկացվում է համայնքի ավագանուն, որ 2018թ-ին համայնքի բյուջեի եկամտային մուտքերը նախատեսված 28442,4 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 24908,7 դրամ, կամ հավաքագրումը կատարվել է 87.6 % -ով, իսկ առանց աղբահանության՝ 89,5 %-ով:

Սեփական եկամուտները հավաքագրվել են . հողի հարկ՝ 3017,5 հազար դրամ կամ կատարվել է 44,9 % :

Գույքահարկ - 2763,2 հազար դրամ, կամ 145 % :

Տեղական տուրքեր՝ 10,0 հազար դրամ, կամ 100 % :

Հողի վարձավճար՝ 4621,0 հազար դրամ, կամ 97,6 %:

Այլ մուտքերից .

Չի կատարվել աղբահանության վճարների հավաքագրում, նախատեսված 588,0 հազար դրամի դիմաց բնակչության կողմից վճարումներ չեն եղել : Այդ ուղղությամբ 2019 թ-ին կիրականացվեն անհրաժեշտ միջոցներ:

Ծախսային մաս .

Ըստ 2018թ-ի համայնքի բյուջեով հաստատված ծախսային հոդվածների ծախսերը նախատեսվել է 28442,4 հազար դրամ :

Աշխատակզմի պահպանման ծախսերից նախատեսվել է՝

Աշխատավարձ՝ 16500,0 հազար դրամ

Պարգևատրումներ՝ 2000,0 հազ.դրամ, համակարգչային ծառայություններ՝ 250,0 հազ. դրամ, Տեղեկատվական ծառայություններ՝ 150,0 հազ.դրամ, հատուկ նպատակային այլ նյութեր՝ 640,0 հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար՝ 650,0 հազար դրամ :

Օգնություն քաղաքացիներին՝ 557,0 հազար դրամ :
Տնտեսական և գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման համար՝
200,0 հազար դրամ :
Մասնագիտական ծառայությունների համար՝ 50.0 հազար դրամ :
Էլ. Էներգիայի, կապի ծառայությունների վճար՝ 1328,0 հազար դրամ :
Այլ հարկեր և նվիրատվություններ՝ 10,0 հազար դրամ :
Գործուղման ծախսեր՝ 300.0 հազար դրամ :
Աղբահանության ուղղությամբ կատարվող ծախսեր՝ 588,0 հազար դրամ :
Պահուստային ֆոնդ՝ 5219,4 հազար դրամ :
Ընդհանուր ծախսեր՝ 28442,4 հազար դրամ :
2018թ -ի ընթացքում ըստ համապատասխան հոդվածների կատարվել են ներքոհիշյալ ծախսումները.

Աշխատավարձ՝ 15688,9 հազար դրամ
Պարգևատրումներ՝ 1749,0 հազ.դրամ, համակարգչային ծառայություններ՝ 86,4 հազ. դրամ, Տեղեկատվական ծառայություններ՝ 111,5 հազ.դրամ, հատուկ նպատակային այլ նյութեր՝ 215,4 հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար՝ 260,0 հազար դրամ :
Օգնություն քաղաքացիներին 545,0 հազար դրամ :
Տնտեսական և գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման համար 192,5 հազար դրամ :
Մասնագիտական ծառայությունների համար 0 դրամ :
Էլ. Էներգիայի, կապի ծառայությունների վճար 1050,6 հազար դրամ :
Այլ հարկեր և նվիրատվություններ՝ 9,5 հազար դրամ :
Գործուղման ծախսեր՝ 98.0 հազար դրամ :
Աղբահանության ուղղությամբ կատարվող ծախսեր 0 դրամ :
Պահուստային ֆոնդից ծախսվել է 2344,6 հազար դրամ :
Ընդհանուր ծախսեր՝ 22351,8 հազար դրամ, կամ ծախսերն կատարվել են նախատեսվածի 88,2 % :

Համայնքի և ՋՀՀ –ի միջոցներով հիմնանորոգվել է մանկապարտեզի թիվ 1 մասնաշենքի 1-ին հարկը, կապիտալ նորոգման արդյունքում այն դարձնելով հարմարավետ հանդիսությունների սրահ կահավորված կահույքով և համապատասխան խոհանոցով: Ջինիշյան հիշատակի հիմնադրամի կողմից ծախսվել է 2895,0 հազար դրամ, համայնքի բյուջեի կապիտալ նորոգման ծախսերից, հոդված՝ 5113 ծախսվել է 2575,0 հազար դրամ:

Տարեվերջյան ազատ մնացորդ է մնացել 1024,3 հազար դրամ:

Համայնքի ղեկավար՝

Գ. Սարգսյան

Նորակերտ համայնքի ավագանու ընդլայնված նիստ

. 25.01.2019թ.

Օրակարգ

1. Նորակերտ համայնքի ղեկավար Գ. Սարգսյանի հաշվետվությունը համայնքի 2018թ. Բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման ուղղությամբ :

/ զեկ. Գ. Սարգսյան /